Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

aravot daily

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

83/4179/ 4 մայիսի 2012 ուրբաթ

ISSN 1829-2224
12071

Ա

## Նոր տարրեր

Մայիսի 6-ի երեկոյան ՀՀԿ-ն կասի, որ ընտրությունները անցել են աննախադեպ թափանցիկ եւ ժողովրդավար պայմաններում, իսկ ՀԱԿ-ը կասի, որ սրանք առավել խայտառակ ընտրություններն էին Երրորդ հանրապետության պատմության ընթացքում, եւ եթե ժողովուրդը չբռունցքվի եւ ոտքի չկանգնի, ապա Հայաստանը վերանալու է աշխարհի քարտեզից: Այդ երկու ծայրահեղացված գնահատականները կապ չունեն իրականության հետ՝ մենք նույնքան հեռու ենք ժողովրդավարությունից, որքան՝ աշխարհի քարտեզից ջնջվելուց: Այս սպառնալիքի մասին չեմ էլ ուզում խոսել. առանց այդ էլ «պատմականորեն» եւ «գենետիկորեն» վախեցած ժողովրդին հերթական անգամ սարսափեցնել կործանումով՝ ես չեմ պատկերացնում, թե ինչպիսի քաղաքական դիվիդենտներ է հնարավոր դրանից շահել:

Լավատեսական «ժողովրդավարական պատկերների» համար էլ որեւէ հիմք չկա. ընտրակաշառքներն արդեն բաժանված են, վարչական բոլոր լծակները կիրառված են, ուռճացված ցուցակները «դզած են», անգրագետ օլիգարխներն էլ իրենց տեղերն արդեն ապահովել են: Այդ պայմաններում դժվար է ակնկալել, որ որեւէ քաղաքական ուժ, բացի ՀՀԿ-ից ու ԲՀԿ-ից, կարող է ստանալ ավելի մեծ, քան 10-15 հոգանոց խմբակցություն:

Այսքանով հանդերձ, այս շաբաթների ընթացքում ի հայտ են եկել քաղաքական մշակույթի նոր տարրեր: Ընդդիմությունը չէր բավարարվում կախաղանների եւ տրիբունալների հնամաշ սպառնալիքներով, հայհոյանքներով եւ վիրավորանքներով, այլ փորձում էր նաեւ քաղաքական եւ տնտեսական այլընտրանքներ առաջարկել: Ավելի մեծ չափով դա վերաբերվում է, բնականաբար, Դաշնակցությանն ու «Ժառանգությանը»: Իշխանությունը չէր միացրել ռեպրեսիվ ապարատը, ինչպես որ դա եղել էր նախկինում, երբ, մասնավորապես, ոստիկանությունը ահաբեկում էր ընդդիմության համակիրներին: Իշխանությունը, որպես կանոն, չէր պատասխանում իր հասցեին հնչող վիրավորական որակումներին: Հեռուստաեթերում ընդդիմության համար ստեղծվել էին ինքնարտահայտվելու նորմալ պայմաններ: Երեք քաղաքական ուժեր, ունենալով տարբեր մոտեցումներ, պայմանավորվել են միասնաբար վերահսկել ընտրությունների օրինականությունը:

Այդ ամենը մի փոքր հույս է ներշնչում, որ մեր քաղաքական համակարգը, թեեւ շատ դանդաղորեն, բայց սկսել է շարժվել մեռյալ կետից: Որ ընտրություններից հետո թեեւ կլինեն հանրահավաքներ, բողոքարկումներ եւ վերոհիշյալ «էսթախուլոգիկ» սպառնալիքներ, բայց չեն լինի բախումներ: Որ խորհրդարանում հայտնված ուժերը, անկախ նրանից, թե ինչ կոալիցիաներ են կազմելու, կձեւավորեն այնպիսի կառավարություն, որը ունակ կլինի մեղմացնել ներկայիս սոցիալական լարվածությունը: Բոլոր դեպքերում, լավատեսությունը մեր դեպքում պետք է չափազանց զգուշավոր լինի:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԱԺ-ում ուզում ենք տեսնել նորմալ մարդկանց

Այս լուսանկարներում պատկերված են մարդկանց դեմքեր: Այդ մարդիկ պատկանում են տարբեր քաղաքական հոսանքների, հաճախ վիճում են իրար հետ, հաճախ խստորեն քննադատում են իրար: Բայց այդ դեմքերի մեջ կա իմաստ, բովանդակություն, այսպիսի դեմքեր ունեցողները կարողանում են իրենց ուղեղները շարժել՝ առաջնորդվելով ոչ թե կաղապարներով, այլ՝ գաղափարներով: Բացի լուսանկարներում պատկերվածներից, թեկնածուների մեջ կա նման մարդկանց եւս 2-3 տասնյակ:

Հենց նրանց ենք մենք ուզում տեսնել Ազգային ժողովում:



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Տիգրան Սարգսյանը համաձայն է նախկին նախագահների հետ

«Ես համաձայն եմ նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Մեզ անհրաժեշտ են փոփոխություններ: Մեր այն թիմը, որ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ժամանակ ապահովել է երկրի անվտանգությունը եւ երկնիշ տնտեսական աճը, ունի այդ փորձն ու կարողությունները այսօր նույնպես իրականացնել փոփոխություններ»,- այսպես արձագանքեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն «Առավոտի» հարցին՝ ինչպես կմեկնաբանեք Ռոբերտ Քոչարյանի «Մեդիամաքս» գործակալությանը տրված հարցազրույցը:

### «Միասնական շտաբի դեմ շարախոսող ուժերը անդրկուլիսյան խաղերի մեջ են իշխանության հետ»

Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀԱԿ հանրահավաքում երեկ նշեց, որ բոլոր մարզերում անցկացված զանգվածային միջոցառումների, հանրահավաքների շնորհիվ ՀԱԿ-ին հաջողվեց ժողովրդին հանել թմբիրից եւ հաղթահարել երկրում տիրող վախի մթնոլորտը. «Ընտրարշավի օրերին մենք վերջնականորեն համոզվեցինք, որ իշխող վարչախումբը ի դեմս Հանրապետականի եւ ՕԵԿ-ի, ոչ մի ձայն չունի: Ընտրարշավը բացահայտեց նաեւ, որ արդար ընտրությունների անցկացմամբ անկեղծորեն շահագրգռված են միայն երեք ուժեր՝ ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն եւ ԲՀԿ-ն: Միասնական շտաբի գործունեության դեմ շարախոսող մնացյալ ուժերը կամա թե ակամա, վերջին հաշվով սպասարկում են իշխանությանը կամ անդրկուլիսյան խաղերի մեջ են նրանց հետ»:

Կարդացեք նաեւ էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Փաստարկ» մամուլի ակումբի հյուրն է՝ ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը:

### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23, Սյունիքի հովիտներ + 9 + 19, Սյունիքի նախալեռներ + 4 + 17, Արցախ + 7 + 19

## ՄՈՒՏՔԸ՝ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԻՑ

### Այդ մարդը ես եմ



Այո, այդ մարդը ես եմ: Եվ ներիր ինձ, իմ քարոզարշավիհալած ազգ, ներիր ինձ՝ քո խոնարհ զավակին: Եվ, եթե ժամանակ ունես, կարդա այսօրվա Գիրս:

Գարունը եկավ, իսկ մեզ սկսում են հուսահատեցնել: Եվ ինչ լավ է, որ անկախ հուսահատողներից, գարունը հայտնվում է ճիշտ ժամանակին, երբ մենք ձմռան ցրտից հալածական ներանձնանում ենք ու մեզ լքված ու մոռացված ենք համարում:

Ցուրտը միշտ էլ վիրավորել է ինձ: Եվ երբ որպես մխիթարություն վրա է հասնում գարնան անվախճանականությունը եւ ջնջում մայթերի սառույցի պես լղրծուն քաղաքական թախիծը, որը ձյունաեղյամի նման փակում էր հեռաստանը եւ մեզ բթացնելով դարձնում մանրախնդիր՝ բանբասողներին համամիտ նախընտրական զանգված... Հայտնվում է գարունը, որպես միակ փրկություն:

Եվ բոլոր զգայուն հոգիները միանգամից հասկանում են. ոչինչ որ իրենք մեծամասնական ցուցակում չկան եւ ոչ էլ համամասնականի թեկնածուներ են:

Կարեւորը գարունն է, զարդարված ծիրանի ծառով, կարեւորը ծաղիկն է ու ծաղկող ծառը, խոտը, խոտը կանաչող, որի հայտնվելը մենք այդպես էլ չենք տեսնում, քանզի այն հայտնվում է, երբ մենք քնած ենք լինում եւ երեւում է մեզ որպես մեր չտեսած երազի շարունակություն:

Եվ քանի դեռ մենք բոլորս չենք դարձել սոսկ անդեմ ընտրազանգված եւ ունենք մեր անուն ազգանունը, փորձենք վայելենք գարունը, որը նոր բացվող ծաղկի հետ, արթնացնում է հին, քամուց քշված մի անցյալ ծաղկի շնոռացվող ցավը, մեր կյանքի, մեզանից հեռացած գարունները, որ մենք մեր երկրի անկախությունը հաստատելու ճանապարհին, այդպես էլ չվայելեցինք մանրամասն:

Իսկ հիմա մոռանանք ամեն ինչ ու մեզ հանձնենք գարնան ծփանքին, քանի դեռ ընտրություններին գրեթե օր չի մնացել: Եվ հիշենք, որ մենք ենք մեր եւ մեր կորուսյալ գարունների ու մեր երկրի այսօրվա գարնան Տերը:

Հայը զարմանալի մարդ է. հազար կորուստներից հետո վերքերը մոռանում եւ բարեկամության ձեռք է մեկնում իր թշնամուն: Ճիշտ է, թե՝ սխալ. դա հայի բնույթն է: Թեեւ, պատմությունը մեր անցյալը չէ, պատմությունը մեր ապագան է: Եվ մեր անցավոր Մեծերը ոչ թե մեր թիկունքում են, այլ՝ մեր դիմաց, ում խոսքին, մտքին ու գործին պիտի կարողանանք հասնել:

Քարոզարշավիհալած իմ այս օրերի մեջ, երբ բոլոր խոսափողերն ինձ, իմ տիկնոջն ու զավակներիս փրկելու առաջարկություն էին անում՝ հինգ րոպեում ավելացնելով մեր աշխատավարձը եւ թոշակները՝ ես զարմանալիորեն լսեցի մի ձայն(թույլ տվեք անունը չինչեցնել , ով իր տանը նստած ասում էր, որ չկա մի մարդ մեր հանրապետությունում, ով իր կամոք ձայն տա այսօրվա իշխող կուսակցությանը: Թող ինձ ների իմ հին բարեկամը, որովհետեւ մի մարդ հաստատ կա, եւ այդ մարդը ես եմ, ով ձայն է տալու:

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ

## Դեմ առ դեմ

**«ԱԺ քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիթորինգ» ծրագրի ներկայացրած տվյալներով, 4-րդ գումարման Ազգային ժողովն անցած 5 տարիների ընթացքում ընդունել է 1412 օրենք, որից 1200-ի հեղինակը կառավարությունն է:**

Ասել է թե՝ ԱԺ պատգամավորները օրենսդրական նախաձեռնությունների հարցում ցուցաբերել են ընդամենը 15 տոկոսանոց ակտիվություն՝ հիմնականում առանց զգալի փոփոխությունների ընդունելով կառավարության ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունները: Նման ցուցանիշներ արձանագրած ԱԺ գործունեությունը կարելի՞ է հաջողված համարել: Այս հարցի շուրջ դեմ առ դեմ բանավիճում են «ԱԺ քաղաքական ուժերի օրենսդրական գործունեության մոնիթորինգ» ծրագրի ղեկավար Լուսինե Վասիլյանը եւ ԱԺ ԲՀԿ խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանը:

Լուսինե Վասիլյան- Բացի այն, որ ԱԺ ընդունած 1412 օրենքներից միայն 200-ն է պատգամավորների նախաձեռնությունը, դրանցից 200-ն էլ եղել են օրենքներ, որոնք կառավարությունն անհետաձգելի է համարել եւ խորհրդարանը դրանք ընդունել է հատուկ կարգով: Այսինքն, 5 տարվա ընթացքում ընդունված օրենքների մեկ վեցերորդը քննարկել է քսաննշորսժամյա ռեժիմով, հետեւաբար, անգամ ոչ պրոֆեսիոնալ աչքի համար է պարզ, որ այդ օրենքները շատ հանգամանորեն չեն քննարկվել: Թեեւ դրանք վերաբերվել են շատ կարեւոր հարցերի: Որպես կանոն, կառավարությունն անհետաձգելի է համարում հանրային կարեւորություն եւ մեծ հրատապություն ունեցող օրենքները: Ուզում եմ նշել եւս մեկ ցուցանիշ, որը վերաբերում է խմբակցությունների քվեարկությունների ընդհանրացված պատկերին. ըստ այդմ կոալիցիոն խմբակցությունները հիմնականում կողմ են քվեարկել, եւ միայն բացառիկ դեպքերում են եղել դեմ: Սա նշանակում է, որ խորհրդարանը հիմնականում պաշտպանել է կառավարության ներկայացրած օրինագծերը: Այդպիսով, շատեմ անվերապահորեն, բայց գրեթե հարյուր տոկոսին մոտեցող լիարժեքությամբ հավանություն է տվել այն օրենսդրական քաղաքականությանը, որն առաջարկել է կառավարությունը:



Արամ Սաֆարյան- Այդուամենայնիվ, ես ուզում եմ նշել, որ չորրորդ գումարման Ազգային ժողովն իր առանձնահատկություններն է ունեցել նախորդ խորհրդարանների համեմատ: Դա այն է, որ այս խորհրդարանում չեն եղել օդեոզ, սկանդալային, աղմկահարույց դեպքեր, որ այստեղ գերակշռել են ինտելեկտուալ քննարկումները, խոսակցությունները եւ քաղաքական բանավեճերը իշխանության եւ ընդդիմադիր պատգամավորների միջեւ:

«Առավոտ»- Դուք իսկապե՞ս ինտելեկտուալ քննարկումների ու բանավեճերի գերակշռություն եք տեսել այս ԱԺ-ում:

- Այո, քիչ ինտելեկտուալներ չեն եղել այս Ազգային ժողովում եւ նրանց դերակատարությունն ու ներկայությունը միշտ էլ իրեն զգացնել է տվել, ուզում եմ նշել՝ ոչ միայն իշխանության, այլ նաեւ ընդդիմության շարքերում:

«Առավոտ»- Այնուամենայնիվ, պարոն Սաֆարյան, ինչպես եք գնահատում Ձեր ընդդիմախոսի ներկայացրած ցուցանիշները: 1400 ից 200 օրենսդրական նախաձեռնությունն ըստ Ձեզ, օրենսդիր մարմնի աշխատանքի նորմա՞լ ցուցանիշ է: Բացի այդ, եթե ինտելեկտուալ քննարկումների գերակշռության հարցում համեմատական անցկացրեցիք նախորդ խորհրդարանների հետ, ապա այս դեպքում նույնը անելով՝ ինչ կարող եք ասել՝ նախորդ գումարումների խորհրդարաններում որքանով է օրենսդրական նախաձեռնողականության ցուցանիշը տարբերվել ներկայիս 15 տոկոսից:

- Ես ծանոթ չեմ նախորդ խորհրդարանների ցուցանիշներին, բայց վերջին 5 տարիներին աշխատանքի բերումով եղել եմ եվրոպական 10-ից ավելի երկրների խորհրդարաններում: Եվ ամենուրեք ինձ հետաքրքրել է այդ հարցը՝ ամեն տե՞ղ է այդպես, որ կառավարությունը բերում է, եւ խորհրդարանն էլ քվեարկում: Ուրեմն ասեմ, Շվեդիայից սկսած, Նորվեգիայով եւ Հունաստանով վերջացրած՝ ամենուրեք նույն պատկերն է: Ամենուրեք կառավարությունը գերակշիռ օրենսդրական նախաձեռնությունների հեղինակն է: Հարաբերակցության մասին կդժվարանամ ասել, թե արդյո՞ք 1400-200 հարաբերակցությունն է, բայց օրինակ երբ Հունաստանում ես այդ մասին հարցրեցի իշխող կոալիցիայի անդամներին, նրանք ասացին՝ այո, իհարկե, բա կառավարությունը պետք է ներկայացնի...

«Առավոտ»- Դրա համար էլ Հունաստանը հայտնվել է նման վիճակում:

Արամ Սաֆարյան- Բայց նույն պատկերն է նաեւ ամենազարգացած երկրում՝ Նորվեգիայում:

Լուսինե Վասիլյան- Այո, թերեւս շատ երկրներում է կառավարության ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունների թիվը գերակշռում, սակայն այստեղ խոսքը հարաբերակցության մասին է. նման 1400-200 հարաբերակցությամբ որեւէ խորհրդարան չի հանդիպել: Կա գերակշռություն՝ բայց առավելապես հավասար նժարներ են, որոնցից որոշ երկրներում գուցե մի թեթեւ առավելություն ունի կառավարությունը: Բայց ես կրկին ուզում եմ շեշտել, որ հարցը միայն այդ ցուցանիշը չէ, դրանից հետո գալիս է օրենքների քննարկման ընթացքում խորհրդարանի դրսեւորած վարքագծի հարցը:

Արամ Սաֆարյան- Այստեղ ես լիովին համաձայն եմ: Դա անտանելի է, եվ մենք էլ, մյուս կուսակցություններն էլ միշտ փորձել ենք պայքարել այդ քսանչորսժամյա ռեժիմների դեմ: Միշտ ասել ենք՝ եղբայր, չի կարելի երկուշաբթի առավոտյան ժամը 10-ին օրինագիծը բերել եւ պահանջել, որ դա ժամը 12-ին ընթացակարգով մտնի խորհրդարանի լիագումար նիստի քննարկման:

Բանավեճը վարեց

ԱՐԵՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Բանավեճն ամբողջությամբ կարող եք դիտել Aravot.am կայքում:

## ԲՀԿ-ի եզրափակիչ հանրահավաքը՝ անձրեւի տակ

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը թեեւ երկար էր պատրաստվել քարոզարշավային եզրափակիչ հանրահավաքին, սակայն անձրեւային եղանակը խանգարեց եւ հանրահավաքն ավարտվեց արագացված տեմպերով:

«Սիրելի ժողովուրդ, ամենակարեւորը՝ գնացեք ընտրության եւ ոչ մեկի մի լսեք՝ միայն ձեր որոշումն է կարեւորը ու առաջնայինը: Ինչ թելադրում է ձեր սիրտը, այդպես էլ ընտրեք»,- հորդառատ անձրեւի տակ ընտրողներին իր կոչն ուղղեց ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը Մատենադարանի բեմահարթակից ու դրանով ավարտեց իր ելույթը: «Անձրեւ է գալիս, չեմ ուզում, որ թրջվեք: Աստված ձեզ պահապան, շնորհակալություն»,- ասաց նա՝ հրաժարվելով անձրեւանոցից: Անձրեւի տակ էին կանգնած նաեւ ԲՀԿ-ի ողջ թիմը՝ համամասնական ցուցակի անդամները, ԲՀԿ-ական մարզպետները, մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները:

Կարճ ելույթներ ունեցան նաեւ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը եւ քարոզչության պատասխանատու Նաիրա Զոհրաբյանը: Վարդան Օսկանյանը, մասնավորաբար ասաց, որ եթե կան մարդիկ, ում համար հանդուրժելի է ներկայիս իրավիճակը, որը ստեղծվել է իշխող կուսակցության շնորհիվ, ապա թող դարձյալ ընտրեն այն: Թեեւ վստահություն հայտնեց, որ մայիսի 6-ին ժողովուրդը քվեարկելու է փոփոխությունների օգտին ու այն ուժի օգտին, որը միշտ եղել է ժողովրդի կողքին:

«Ես համոզված եմ, որ վստահելով ձեր քվեն կտաք այն ուժին, որի կարգախոսներից մեկն է՝ «Մարդու կողքին, մարդու համար» եւ որի բարձրագույն արժեքը մարդն է: Եվ ես ավելի քան համոզված եմ, որ մայիսի 7-ին, քվեարկությունից հետո, հերթական անգամ չենք խոսելու հայի հետին մտքի մասին, քանի որ մեր բոլորիս թիկունքին կանգնած է մեր առաջնորդ Գագիկ Ծառուկյանը»,- իր խոսքում ասաց Նաիրա Զոհրաբյանը:Հանրահավաքում պետք է երգեր նաեւ Ռուբեն Հախվերդյանը, սակայն, անձրեւի պատճառով դա էլ տեղի չունեցավ:Ելույթների ընթացքում արդեն հորդառատ անձրեւ էր, ու քանի որ մարդիկ էլ սկսեցին հեռանալ՝ հանրահավաքը այդքանով եզրափակվեց:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՄՀԿ-ն ՀԱԿ-ին հաստատ չի միանա

«Մենք մտավորականների, իրավաբանների կուսակցություն ենք: Մենք այն մարդիկ չենք, որ փողոցներ դուրս գանք»,- երեկ «Միավորված հայեր» կուսակցության անդամ Հովհաննես Հովհաննիսյանը Aravot.am-ի հետ զրույցում մեր հարցին՝ եթե ձեր ակնկալիքները չարդարանան, չանցնեք ԱԺ, չե՞ք պատրաստվում ցույցի, միտինգների ելնել: Ըստ նրա, եթե ժողովուրդն իրենց չընտրի, նշանակում է պատրաստ չէ իր վրայից թոթափել օլիգարխների լուծը. «Չենք պատրաստվում որեւէ անօրինական քայլի գնալ: Քարոզչության ընթացքում էլ մենք ունենալու ենք հանդիպումներ ժողովրդի հետ, թերթի տպագրություն, ինտերնետային հաղորդագրություններ, այս քայլերն ենք անելու: Որպեսզի դուրս գանք փողոց՝ փողոցային քարոզարշավների՝ դա մենք չենք ընդունում»: Մեր դիտարկմանը, որ ՀԱԿ-ում էլ ինտելիգենտներ, մտավորականներ կան, բայց փողոց դուրս գալիս են՝ նա պատասխանեց. «Ուրեմն թող օրենքի սահմաններում գործեն, ինչի՞ են հակառակը գործում: Ինչի՞ համար 20 տարի առաջ ժողովրդին մինչեւ վերջին թելը թալանեցին: Բա մտավորականը կթալանի՞ իր ժողովրդին: Նրանք հույս ունեն, որ պետք է գան՝ իրենց շահերն իրականացնելու համար: ՀԱԿ-ն ընտրազանգված չունի, դրանք ուղղակի այն մարդիկ են, որոնք դժգոհ են իշխանությունից, բայց ես այդ մարդկանց, որոնք ՀԱԿ-ին պատրաստվում են ձայն տալ՝ չեմ հասկանում: Ինչպե՞ս կարելի է մեկին ձայն տալ, որն իրեն թալանել, կեղեքել է եւ հիմա ուզում է գալ իշխանության՝ նույնը շարունակելու համար, ես դա չեմ հասկանում: Տխրահռչակ սեփականաշնորհման այն վաուչերային քաղաքականությունը միթե՞ բավական չէր, որպեսզի տեսնեն, որ չի կարելի այդ քայլն անել: Ի՞նչ է նշանակում ժողովրդի 4%-ը, դա մի 100-200 ընտանիք է, իրենց ձեռքը վերցնել ազգային հարստության եւ ժողովրդի հարստության 70%-ը: Այսինքն՝ մեկին 100, մեկին 1000 տարբերությամբ, մարդիկ չքավորության դուռը հասան: Եվ հիմա նրանք ցանկանում են գալ իշխանության»: Մեր հարցին՝ գուցե Լեւոն Տեր-Պետրոսյանը գալիս է՝ իր նախկին սխալնե՞րն ուղղելու՝ պարոն Հովհաննիսյանը պատասխանեց. «Դուք հույս ունեք, որ նա իր սխալները կուղղի՞, թե՞ ընդհակառակը, ավելի վտանգավոր քայլեր կանի: Մի՞թե դուք չզգացիք, սրանից 1 տարի առաջ թե ինչպես նա փորձ արեց հին, միտինգային տարբերակով իշխանությունը վերցնելու: Նրան չհաջողվեց, դրա համար տակտիկան, ռազմավարությունը փոխում է, իսկ նպատակը նույնն է՝ իշխանությունն իր ձեռքը վերցնել: Մենք դեմ ենք այդպիսի ռազմավարության եւ միանալ նրան ես չեմ պատկերացնում: Ինչպե՞ս կարելի է միանալ հանցագործների, մարդկանց, ովքեր ժողովրդին կողոպտել են»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 3.05.2012

# «Ժառանգությանը» չեն ներում իշխանության գծած սցենարին չհամապատասխանելու համար

## Երեկ հայտարարեց կուսակցության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը

«Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների միասնական նախընտրական շտաբը Կենտրոն համայնքում, Շարլ Ազնավուրի անվան հրապարակում ընտրողների հետ հանդիպում էր նախաձեռնել: Այն ավարտվելու էր «Ձախ Հարութի» համերգային ծրագրով:

Մինչ սիրված երգիչը բեմ կբարձրանար, ելույթ ունեցան «Ժառանգության» համամասնական ցուցակով առաջադրված պատգամավորի թեկնածուները:

Մասնավորապես ՀՀ ԱԳ նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանն ասաց, թե իմանալով հանդերձ, որ ելույթ է ունենալու «Ձախ Հարութը», իր համար դժվար եւ անսովոր է սկսնակ երաժիշտի նման լինել երգչի ելույթից առաջ հավաքվածներին «տաքացնողի» դերում՝ ուստի խոստացավ կարճ խոսել: Նա անդրադարձավ «Ժառանգության» քարոզարշավին ու դրանից ստացած տպավորություններին, այլ ասաց, թե «սա Երեւանն է՝ մեր մայրաքաղաքը, այստեղ է ծնվում ընդդիմադիր միտքը», ու հարկ համարեց երեւանցիների հետ կիսել իր այն տպավորությունը, թե «Հայաստանն այսօր ֆեոդալիզացիայի ժամանակաշրջան է ապրում, ինչ-որ մարդիկ ֆեոդալական բարքեր են փորձում ներմուծել մեր կյանք, ամեն մի տեղական իշխանություն իրեն ֆեոդալ է զգում եւ ինքն է որոշում, թե ով կարող է գալ իր ֆեոդալության տարածք եւ դիմել ժողովրդին»:

«Սա արտառոց բան է»,- ասաց Արզումանյանը՝ որպես ասվածի օրինակ բերելով մի քանի րոպե առաջ Մատենադարանին հարող տարածքում ԲՀԿ-ի հանրահավաքը. «Տեսանք մի քանի հարյուր հազար մարդ, որ 88-ից հետո չէինք տեսել: Ավտոբուսներով Հայաստանի բոլոր ծայրերից բերել էին ֆեոդալներին սպասարկելու եւ մեզ պատգամ ուղարկելու համար: Բայց, փառք Աստծո, նույնիսկ բնությունն ընդվզեց դրա դեմ (խոսքը հորդառատ անձրեւի մասին էր- խմբ.), եւ թույլ չտվեց, որ այդ զավեշտը շարունակվի: Դա ընդամենը 15 րոպե տեւեց: Հայաստանում ամեն ինչ կարելի է: Կարելի է 20 տարի փող գողանալ, հարկ չմուծել, հետո այդ գողացած փողերով շրջաններից մարդկանց ավտոբուսներով բերել եւ մեզ ցույց տալ, թե, իբր, աջակցություն ունեն: Գողը չի կարող աջակցություն ունենալ: Ժողովուրդը շատ լավ գիտի ամեն մեկի արժեքն էլ»:



Արզումանյան ասաց, թե երեւանցիները բոլորն էլ 1990-ական թվականներից մշտապես ընդդիմադիր ուժերի օգտին են քվեարկել, «որովհետեւ սա Երեւանն է, սա ըմբոստ քաղաք է, սա ընդդիմադիր քաղաք է, եւ թույլ չի տալու, որ ի ձայնն առնեն մուրաբայով, մեղր ու բլիթով: Ոչ, եղբայր: Մեր քաղաքում դա չի անցնի: Դրա համար ես վստահ եմ, որ դուք ձեր ձայնը տալու եք «Ժառանգությանը» ոչ միայն այն բանի համար, որ տեսել եք, թե վերջին 5 տարիների ընթացքում ինչպես է այս կուսակցության փոքրաթիվ խմբակցությունն ԱԺ-ում ամեն մեկի իրավունքի եւ արժանապատվության համար պայքարել, փողոցներից տուն չի գնացել. ԱԺ-ից փողոց, փողոցից՝ բանտ, որտեղ եղել են մեր եղբայրները, այլեւ այս 5 տարվա ընթացքում ապացուցել է, որ տեր է եղել ձեր իրավունքներին: Հիմա եկել ենք նոր պատգամով, նոր եւ ընդլայնված թիմով՝ «Ժառանգության», «Ազատ դեմոկրատների» եւ հասարակական սեկտորի ներկայացուցիչներով միասին, եւ ասում ենք՝ ձեր այս բոլոր ընդդիմադիր ձայներով ըմբոստ ոգին գործուղեք խորհրդարան, եւ մենք խոստանում ենք՝ ինչպես 5 տարի շարունակ «Ժառանգությունն» է արել, մենք էլ այդ ըմբոստ ոգին պահելու ենք այնքան ժամանակ մինչեւ իշխանությունը գա ու հաշվետու դառնա յուրաքանչյուր քաղաքացու առջեւ: Մենք չենք գալու խաբելու: Կարծում եմ, որ մենք՝ երեւանցիներս, չենք գնալու նրանց ետեւից, ում գինը 5 հազար է, ու ինչ-որ 5 հազար դրամի համար մեր ձայնը չենք տալու նրանց»: Նախկին ԱԳ նախարարն իր ելույթն ավարտեց նրանով, որ ասաց, թե սիրում է բոլոր հավաքվածներին ու առանձին-առանձին նրանց ձայնն է հայցում մայիսի 6-ին կայանալիք ընտրություններում. «Մայիսի 6-ին միասին տեր դառնանք մեր երկրին, մայիսի 6-ին մենք գալու ենք նոր Հայաստան ստեղծելու համար»:

Ելույթ ունեցավ նաեւ «Ժառանգության» համամասնական ցուցակում ընդգրկված անկուսակցական, բայց ընդդիմադիր գործիչ, ԱԺ նախկին փոխխոսնակ Կարապետ Ռուբինյանը, ով ասաց, թե ՀՀ քաղաքացիների երազած Հայաստանը ոչ ոք նրանց սկուտեղի վրա չի մատուցելու, քանի դեռ երկրի իշխանությունը զավթված է Սերժիկ Սարգսյանի կողմից, ու ամենօրյա պայքարի կոչ արեց հավաքվածներին: Խոսելով «Ժառանգության» մասին՝ Ռուբինյանն ասաց, թե իրենք այդ կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվածներն ԱԺ-ում երկու նպատակ են հետապնդելու. իրենց սկզբունքայնությամբ ճակատ ձեւավորել օլիգարխիկ համակարգի դեմ պայքարելու համար, եւ կանգնել շարքային քաղաքացու կողքին ու պայքարել նրա իրավունքների ոտնահարման դեմ, «իսկ դա «Ժառանգությունն» արդեն ապացուցել է, որ կարող է անել ու անելու է»:

«Ժառանգության» նկատմամբ ընդհանուր հարձակում կա թե՛ ընդդիմության եւ թե՛ իշխանությունների կողմից, ու պատճառն այն է, որ «Ժառանգությունը» չենթարկվեց այն ընդհանուր սցենարին, որը ձեւավորվել էր իշխանության կողմից: «Ժառանգությունը» մասը չդարձավ այն մարմնին, որն ուներ մեկ նպատակ՝ պաշտպանության տակ վերցնել կոալիցիոն ուժերից մեկի անօրինական գործողությունները, եւ դա չներվեց «Ժառանգությանը» կամ մտածում են՝ թե չեն ներելու»,- իր խոսքում հայտարարեց «Ժառանգության» վարչության փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը՝ անդրադառնալով կուսակցության դեմ այս օրերին նաեւ կուսակցական լրատվամիջոցներում տարվող հակաքարոզչությանը:

Հակոբյանն ասաց, թե չի ուզում ընտրություններից առաջ դավադրությունների մասին խոսել, բայցեւ նկատեց. «Մեր կարգախոսը տարբերվում է բոլորի կարգախոսից: Իշխանափոխություն ասելով մենք հասկանում ենք՝ պետության մեջ համակարգային բարեփոխումներ պետք է լինեն ու պետք է ժողովուրդը միասնաբար պայքարի, որպեսզի իշխանությունից հեռացնի ամբողջ կոալիցիային՝ ՀՀԿ-ին, ԲՀԿ-ին եւ ՕԵԿ-ին (հավաքվածներն այս թվակման իրենց հավանությունը ծափողջույններով հայտնեցին- խմբ.): Եթե որեւէ քաղաքական ուժ 3-4 տարի շարունակ իշխանափոխություն ասելով այսօր ասում է՝ իշխանափոխությունը նշանակում է պահպանել կոալիցիան, ուղղակի կոալիցիայի առաջատարներին մեկը մյուսով փոխարինել, ուրեմն՝ հասկացեք, որ դա ընդամենը դավադրություն է ընդդիմադիր տրամադրություններ ունեցող ժողովրդի նկատմամբ»:

Հակոբյանն ասաց, թե «Ժառանգությունը» գալիս է իր պատգամավորների՝ Զարուհի Փոստանջյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ստեփան Սաֆարյանի ու Անահիտ Բախշյանի նման մարդկանց քանակն ավելացնելու եւ ԱԺ-ին նոր որակ հաղորդելու համար»: Նա վստահեցրեց, թե բոլոր նրանք, ովքեր անձնապես շահագրգիռ են ԱԺ բերել կոճակ սեղմողների՝ կապ չունեն պետության հետ եւ ամեն ինչ անում են իրենց խմբակային շահն ապահովելու համար: Որպես օրինակ նա բերեց մասնավորապես Արարատի մարզում կոալիցիոն ուժերի կողմից, իր ձեւակերպմամբ՝ մեջ-մեջքի տված, տնետուն ընկած մարդկանց փող բաժանելու փաստը,եւ հայտարարեց, թե «Ժառանգությունը» ընտրողի ձայնն անտեր չի թողնելու, գալիս է նաեւ քաղական դաշտին բարոյականություն բերելու համար:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Տեր-Պետրոսյանը Քոչարյանի չափ սխալներ երբեք չի արել»

«Ես 5 տարի առաջ ընտրել եմ Սերժիկ Սարգսյանին, մի ամբողջ տարվա թոշակս չեմ ստացել: Հիմա երկրորդ անգամ գնում եմ նորից ընտրեմ Սերժիկ Սարգսյանին, որ 2 տարվա թոշակ չստանամ»,- երեկ ՀԱԿ-ի հանրահավաքին Aravot.am-ի հետ զրույցում կատակեց հանրահավաքի մասնակիցներից մեկը: Նրանք վստահեցնում էին՝ «Չենք ընտրելու ՕԵԿ-ին՝ երբեք, ՀՀԿ-ին՝ երբեք եւ «Բարգավաճին»՝ երբեք: Որովհետեւ նրանք իրար հետ են, մի կուսակցություն է: Խաբում են ժողովրդին, որպեսզի հետո հավաքեն, ձայները տան լրիվ Սերժին»: Մեր դիտարկմանը, որ ՀԱԿ-ը այդպես չի կարծում եւ միասնական շտաբ է մտել՝ ԲՀԿ-ի հետ՝ նրանք այսպես բացատրեցին՝ «Ստուգման համար է մտել, որպեսզի ստուգեն՝ կեղծիքներ չլինի: «Բարգավաճին» ես շատ էի հավատում, կարծում էի՝ իրոք կուսակցություն է: Բայց որ հետո լսեցի, որ Գագիկը Օսկանյանին բերեց երկրորդը դրեց, ինքը՝ առաջինը, Օսկանյանը՝ 2-ը, ինչի՞ համար՝ որովհետեւ Օսկանյանը Քոչարյանի մոտիկ մարդն է: Իսկ Քոչարյանը հայ ժողովրդի թշնամին է: Այսինքն՝ «Բարգավաճը» Քոչարյանի կուսակցությունն է, ուղղակի մտել են ծաղուկները, որ եկող տարի նախագահականին միանգամից թռնի վերեւ»: Մեր հարցին՝ ի՞նչ եք կարծում, Լեւոն Տեր-Պետրոսյանը ժամանակին սխալներ չի՞ արել՝ նրանք պատասխանեցին. «Ինչքան որ արած լինի՝ Քոչարյանի չափ երբեք չի արել: Քոչարյանը լրիվ Հայաստանը կերավ, 12 մլրդ հիմա փող ունի: Քոչարյանն անպայման եկող տարի կծլի, դուրս կթռնի՝ Սերժի փոխարեն»:



Հանրահավաքի մասնակիցներից մեկը պատմեց, որ նոր է գալիս թոշակը ստանալու տեղից. «Գնացի կնիժկաս տվի, որ թոշակս ստանամ, կամպյուտերը միացրեց, ասեց՝ քո գումարը չի եկել: Ասի՝ գումարներն անհատակա՞ն է գալիս: Ես 84 տարեկան եմ, հենց իմացել են ես մեռել եմ: Իրանք պտի սատկեն: Այն կոպեկները չեն տալիս, որ գնանք վաղը հաց առնենք ուտենք»:

Հավաքի մասնակիցներից մեկը հակադարձելով Տեր-Պետրոսյանին մութ ու ցուրտ տարիների հետ ասոցացնողներին՝ ասաց. «Չեն մտածում, որ եթե ես տղա ունեի, այդ ժամանակ զոհվել է, գնացել Եռաբլուրում պառկել է, ստացվում է, որ ջհանդամին թե չի մեռել, ինչի՞ պիտի մութ ու ցուրտ լիներ: Այդպես է ստացվում: Բթացրել են մեր ժողովրդին այդ աստիճան, որովհետեւ այս իշխանությունը բութ է: Սերժը եւ Քոչարյանը նույնն են, ինչ Բրեժնեւը, որն ասում էր, թե յանի սաղ ինքն է արել, ամեն ինչ: Սրանք էլ Լեւոնի անունը չեն տալիս, չեն ասում, թե Լեւոնն ով է: Չէ՞ որ Լեւոնի ժամանակ Ղարաբաղի հաղթանակ ենք տարել: Այդքան արտասահմանից փող հավաքեցին: Բա Քոչարյան, 12 մլրդ ունեիր, ինչի՞ Ղարաբաղի համար 100 դրամ չդրեցիր: Եկան Հայաստանը կերան, էլ Ղարաբաղում ի՞նչ ունեն իրենք անելու»:

Հանրահավաքի մասնակիցները հույս ունեին, որ ՀԱԿ-ը գոնե 15-20% ձայն կհավաքի:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

## Կեղծիքների չափից է կախված՝ ՀՅԴ-ն կհայհոյի՞, թե՞ չէ

ՀԱԿ-ն ունի եւ թելադրում է ընդդիմության իր չափանիշները՝ ընդդիմություն է նա, ում ծեծում են, ով զրկանքների է ենթարկվում, գիշեր-ցերեկ փողոցում է, բանտ է ընկնում եւ այլն: ՀՅԴ եւ «Ժառանգության» ներկայացուցիչներին դուր չի գալիս, երբ ՀԱԿ-ը թելադրում է այս չափանիշները եւ դրա մասին բազմիցս դժգոհել են: Վերջերս Աղվան Վարդանյանը նշեց, որ երբ գիշեր-ցերեկ հայհոյում են՝ դա ընդդիմություն չէ, ուրիշ բան է, իսկ Ստյոպա Սաֆարյանը նշեց, որ թույլ չեն տալու իրենց պարտադրեն չափանիշներ, թե ով է ընդդիմություն: Այս առնչությամբ Aravot.am-ի հետ զրույցում ՀՅԴ խմբակցության քարտուղար Արտյուշա Շահբազյանը նշեց. «Ընդհանրապես մենք դեմ ենք նրան, որ ինչ-որ մեկը փորձում է դաշտը մենաշնորհել՝ ես եմ՝ ուրիշը չի: Անկախ նրանից՝ դա ով է: Մենք չի, որ պիտի իրար գնահատենք: Այսինքն, եթե մենք ընդդիմություն ենք կամ իշխանություն ենք՝ չմրցակցենք՝ այս ենք, թե՞ այն ենք: Մարդիկ տեսնում են, իրար հետ կռվելով չի, որ պիտի ապացուցվի»: Մեր հարցին՝ եթե կեղծվեն ընտրությունները, ՀՅԴ-ն փողոց դուրս չի՞ գալու ու գիշեր-ցերեկ չի՞ հայհոյելու, պարոն Շահբազյանը պատասխանեց. «Պիտի լինի՝ տեսնենք: Կեղծիքները նայած ինչ աստիճանի կլինեն, ինչպիսին կլինեն, ինչ չափով կազդեն ընտրությունների արդյունքների վրա, ինչպիսի իրավիճակ կլինի: Դժվար է այսպես ասել»:

Հ. Ջ.

# Բռնաբարություն ու ծեծուջարդ՝ նախընտրական Բասենում

## Նախորդ օրը Ախուրյանի տարածաշրջանի այս գյուղում 60-ամյա կնոջ են բռնաբարել, ՀՀԿ-ական գյուղապետին էլ արյունլվիկ են արել:

Մի քանի օր է՝ մոտ 2000 բնակչություն ունեցող այս փոքր գյուղում մեկը մյուսը հետեւից արտառոց իրադարձություններ են տեղի ունենում: Ամենաթարմ դեպքը 60-ամյա Գոհարիկ Բենոյանին բռնաբարելն է. համագյուղացի 53-ամյա Իշխան Հովսեփյանը՝ Չուշո մականունով, երեկոյան ժամը 21-ի սահմաններում, ներխուժելով երբեւէ չամուսնացած ու միայնակ ապրող Գոհարի տուն՝ նրան ծեծելով բռնաբարել է: Շիրակի մարզի դատախազությունից մեզ փոխանցեցին, որ հարուցվել է քրեական գործ՝ Քր օրենսգրքի 138 հոդվածի 1-ին մասով, Իշխանը ձերբակալված է: Նշենք, որ այս հոդվածը նախատեսում է 3-6 տարի ազատազրկում: Դատախազությունից մեզ նաեւ տեղեկացրեցին, որ Իշխանը նախկինում վեց անգամ դատված է եղել: Իսկ բասենցիները նրան բնութագրեցին որպես մանկուց ավազակությամբ ու գողությամբ զբաղվող մարդու: Ըստ գյուղացիների, վերջինս 3 երեխաների հայր է, 2 տարի առաջ նրա որդիներից մեկը հիվանդության պատճառով մահացել է բանակում, նախագահ Սերժ Սարգսյանն էլ, որպես զոհված զինվորի ընտանիքի, նրանց արտահերթ բնակարան է հատկացրել Գյումրու նորակառույց Մուշ 2 թաղամասում: Բասենի գյուղապետ Համլետ Պետրոսյանի տեղեկացմամբ էլ, Իշխանի մյուս որդին Ռուսաստանում է, իսկ դուստրը՝ դպրոցահասակ երեխա է: Գյուղապետի ասելով, Գոհարիկ Բենոյանը նույնպես առողջական խնդիրներ ունեցող, անպաշտպան կին է, խղճելի խավ: «Նման ամոթալի դեպք երբեք տեղի չի ունեցել գյուղի պատմության մեջ, իմ գիտակցական կյանքում, տեղյակ եմ, որ Իշխանը հիվանդության թուղթ ունի, Գոհարը նույնպես հիվանդ է, սա հանգիստ գյուղ է, մարդիկ իրոք լավն են ու ջերմ, բայց պատկերացրեք մի հոգի իր անհավասարակշիռ, անպատկառ ու անամոթ պահվածքով ստվեր է գցում այս գյուղի անբիծ անվան վրա: Ես շատ վատ եմ զգում: Իսկական աստվածուրացության շրջան է սկսվել: Գիտեմ, որ նա միշտ գողությունների համար դատվել է, բայց երբեւէ բռնաբարության համար նստած չկար»,- մեզ հետ զրույցում ասում էր գյուղապետը: Ի դեպ, գյուղացիները պնդում են, որ Իշխանը հարբած է եղել, նրանք նաեւ խոստովանում են, որ թեեւ դեպքը ցնցել է իրենց, այդուհանդերձ գիտակցելով Իշխանի հիվանդ լինելը, հավասարաչափ խղճում են թե Գոհարին, եւ թե Իշխանին: Այս շաբաթը իրոք թարս է սկսվել բասենցիների համար, երկուշաբթի օրն էլ մեկ այլ սկանդալ էր տեղի ունեցել: Գյուղապետ Համլետ Պետրոսյանի նախկին տեղակալը՝ Կամո Հովհաննիսյանը, ամբողջ գյուղի ներկայությամբ գետին էր գցել գյուղապետին՝ նրան ոտքերով հարվածելով ու արյունլվա անելով: Ինչպես պատմեց գյուղապետը, երեկոյան ժամը 19-ի սահմաններում, ինքը աշխատանքից տուն է եկել ու դեռ շորերը չփոխած՝ իր մոտ է եկել Կամո Հովհաննիսյանի զարմիկը՝ իրեն խնդրելով գալ ու բացել գյուղամիջյան ճանապարհներից մեկը: Համլետ Պետրոսյանի պատմելով, խոսքը այն ճանապարհի մասին է, որը մոտ 15-20 տարի փակ է, ընտանիքներից մեկը փակել է այն, որպեսզի գյուղացիները իրենց դռները չկեղտոտեն. անասուններին այդտեղով չտանեն արածացնելու: Կամո Հովհաննիսյանը, ով վեճի մեջ է մտել տանտերերի հետ, տեսնելով գյուղապետին՝ պահանջել է անհապաղ բացել այն՝ իր անասուններին նախիր տանելու համար: Եվ մինչեւ Համլետ Պետրոսյանը գործիքներ է բերել տվել ճանապարհը բացելու համար, Կամո Հովհաննիսյանը հոխորտացել է, նրան սպառնացել է, ամենալկտի հայհոյանքներ տեղացել նրա հասցեին, այնուհետ հրահանգել է լոմը վերցնել ու անձամբ ճանապարհը բացել: Ըստ պարոն Պետրոսյանի, իր նախկին տեղակալը այս ամենը կազմակերպել է՝ ցույց տալու համար, որ գյուղապետը անկարող, թույլ մարդ է: Այնուհետ Կամո Հովհաննիսյանը գետին է գցել գյուղապետին՝ ձեռքերով ու ոտքերով հարվածել նրան, շորերը պատառոտել է, արյունլա արել: Իսկ ո՞րն է եղել պատճառը, մի՞թե Կամո Հովհաննիսյանը ԲՀԿ-ական է, ով փորձել է դուրս գալ ՀՀԿ-ական գյուղապետի դեմ, Համլետ Պետրոսյանը պատասխանեց. «Ես իրոք չգիտեմ նա ԲՀԿ-ական է, թե՝ ոչ, ես 3 տարի է՝ նրա հետ կապ չեմ ունեցել, բայց ենթադրում եմ, որ նա այս ձեւով որոշեց ինձանից անձնական վրեժ լուծել: Երբ ես 4 տարի առաջ ընտրվեցի գյուղապետ, նա իմ տեղակալն էր, նա իրեն վատ պահեց ու 3 ամիս անց իր դիմումի համաձայն հեռացավ աշխատանքից: Դրանից հետո կարծես թե առիթ էր փնտրում ինձանից վրեժ լուծելու: Իսկ հիմա՝ ընտրությունների նախաշեմին, փորձեց ինձ վարկաբեկել, շանտաժի ենթարկել, որպեսզի ես չկարողանամ ձայներ հավաքել իմ կուսակցության՝ ՀՀԿ-ի օգտին, ինքն էլ կանգնի՝ հայտարարի, որ ես չկարողացա ՀՀԿ-ին օգնել: Բայց ասեմ, որ ամբողջ գյուղը իմ կողքին է: Ես ուզեցի մտածել, որ այս ամենը պատահականություն է, բայց տվյալ պահին իմ զգացածը ու նաեւ դեպքերի զարգացումը ինձ հուշում են, որ այդ մարդը իր առջեւ քաղաքական խնդիր է դրել՝ ինձ վարկաբեկել, շանտաժի ենթարկել: Մինչեւ օրս էլ այդ ճանապարհը փակ է, բո ո՞նց են տանում իրենց անասուններին նախիր, ուրիշ ճանապարհ էլ կա իհարկե, հարց է ծագում՝ ինչու՞ հենց այս պահին մտքերն ընկավ փակ ճանապարհը բացել տալը»,- հարցնում է գյուղապետը: Նրա ասելով, ինքը 35 տարեկան է, իսկ Կամոն՝ 55, այսինքն ավելի երիտասարդ է, ուժեղ, կարող էր նրան համարժեք պատասխան տալ, սակայն, որպես հայ Առաքելական եկեղեցու հավատացյալ, զսպել է իրեն, քանի որ առհասարակ հայհոյանքներ չի անում, առավել եւս կանանց ներկայությամբ, այդ պատճառով էլ դիմել է իրավապահների օգնությանը: Շիրակի մարզի դատախազությունից մեզ տեղեկացրեցին, որ հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 316 հոդվածի հատկանիշներով:

Նշենք, որ այդ հոդվածը իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելն է, առաջին մասը նախատեսում է առավելագույնը հինգ տարի ազատազրկում, իսկ երկրորդ մասը՝ կախված մարմնական վնասվածքների ծանրությունից՝ 5-10 տարի ազատազրկում: Կամո Հովհաննիսյանը ձերբակալված չէ, ստորագրությամբ ազատ է արձակվել:Ըստ գյուղապետի, նա փողատեր է, ամեն անգամ գյուղացիներին դատի է տալիս ու տները ձեռքներից խլում, մի ժամանակ զբաղվում էր անասնապահությամբ, մի ժամանակ էլ շինարարության վրա բրիգադիր էր աշխատում: «Ես ուզում եմ, որ նա իր արժանի պատիժը ստանա օրենքով, վերջապես հասկանան, որ այս երկիրը օրինական երկիր է, եւ ով ինչ ուզի չի կարող անել, եթե իշխանության վրա ձեռք են բարձրացնում, ուրեմն հասարակ, անճար քաղաքացու վրա կբարձրացնեն ու կբարձրացնեն: Բայց չպիտի թույլ տանք, իմ երկիրը սկսվում է իմ գյուղից, եթե գյուղը ուժեղ լինի, ուժեղ կլինի երկիրը»,- ասաց գյուղապետը՝ նշելով, որ իր օրոք առաջին անգամ են տեղի ունենում համապետական ընտրություններ:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ



# Եղեգնաձորում հաշվառված է 8184 բնակիչ, իսկ ընտրացուցակում առկա է 9 061 ընտրող

Սա «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը պարզել է ազգային վիճակագրության եւ ՀՀ ոստիկանության տվյալների համադրման արդյունքում:

Արագածոտնի մարզի Արեւուտ գյուղն ունի 133 բնակիչ, սակայն այս պահի դրությամբ գյուղի ընտրացուցակում 164 ընտրող կա: Նույն մարզի Ավշեն գյուղում էլ 291 բնակիչ է փաստացի բնակվում, սակայն գյուղն ունի 312 ընտրող: Լոռիի Այգեհատ գյուղում ապրում է 220 մարդ, բայց ընտրացուցակներով գյուղն ունի 230 ընտրող: Այս մարզի Ջրաշուտում բնակչության թիվը 92-ով կրկին հօգուտ ընտրացուցակների է: Այլ է պատկերը Թալինում. բնակչության թվի եւ ընտրացուցակում առկա ընտրողների թվի տարբերությունը 487 մարդ է: Ընտրացուցակներում ընդգրկված է 5215 մարդ, բայց Թալինում առկա բնակչության թիվը 5702 է:

Այս ուսումնասիրությունները կատարել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը՝ համադրելով վիճակագրության՝ բնակչության թվի 2011-ի ու ՀՀ ոստիկանության կայքի ընտրողների վերաբերյալ տվյալները: Երեկ կենտրոնի գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը ներկայացրեց մի շարք այլ փաստեր՝ պետական երկու մարմինների հրապարակած տվյալներից: Այսպես. Երեւանի Նորք- Մարաշ վարչական շրջանում 11 հազար 300 բնակիչ կա հաշվառված, սակայն ընտրացուցակներում ֆիքսված է 9 հազար 625-ը, այսինքն՝ մնացած 1675-ը դեռեւս ընտրելու իրավունք չունեցող անձինք են: Ստացվում է, որ Մարաշի բնակչության 85,2 %-ը ընտրողներ են: Ապարանում էլ փաստացի հաշվառված է 6 հազար 618 բնակիչ, բայց այդ համայնքի ընտրացուցակներում առկա է 5702-ը: Այստեղ էլ բնակչության 86,6%-ը պետք է գնա ընտրության: Արարատի մարզում էլ, ըստ ընտրացուցակների, Այգեստան գյուղի բնակչության 97,1%-ն է գնալու քվեարկելու: Այստեղ 2269 բնակիչ կա, որից ընտրությանը կմասնակցի 2203-ը: Նույն մարզի Դեղձուտ գյուղում 818 բնակիչ կա: Կքվեարկի 782-ը: Ստացվում է, որ Դեղձուտի բնակչության 95,6 տոկոսն ընտրելու իրավունք ունի: Գեղարքունիքի մարզի Դարանակ գյուղում հաշվառված բնակիչների թիվը 161 է, ընտրացուցակներում դարանակցիները 11-ով ավել են ընդգրկված. առկա է 172 ընտրող: Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում էլ 17 մարդով է ընտրացուցակները կազմվել, այն դեպքում, երբ այս պահի դրությամբ այդ գյուղում ոչ թե 379 մարդ է հաշվառված, ինչպես



Վարուժան Հոկտանյանը (աջից)՝ հաշվառված բնակչության եւ ՀՀ ոստիկանության հրապարակած ընտրացուցակների մասին:

վկայում են ընտրացուցակները, այլ՝ 362: Նույն մարզի Բազում գյուղի փաստացի հաշվառված 1075 բնակիչներին էլ ընտրացուցակներում ավելացել են եւս 128-ը: Այսինքն՝ 1203 ընտրող կա ցուցակով, բայց գյուղում վիճակագրությունը 1075 մարդ է հաշվել: Լոռու մարզի Աթան գյուղում վիճակագրության եւ ոստիկանության տվյալներն ընդամենը 1 մարդով են տարբերվում. գյուղն ունի 213 բնակիչ, ընտրացուցակում առկա է 214-ը: Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում հաշվառված է 3127 մարդ եւ նրանցից ընտրացուցակներում առկա է 2777-ը: Ստացվում է՝ Բալահովիտի բնակչության 88,8%-ն ընտրող է: Շիրակի մարզի Արեգնադեմ գյուղում հաշվառված է 342 բնակիչ, ընտրացուցակներում հայտնվել է Արեգնադեմի 369 ընտրող: Նույն մարզի Աշոցք համայնքում 2482 բնակիչ կա, ընտրացուցակներում տեղ է գտել Աշոցքի 2218 ընտրող: Այս համայնքում ընտրությանը կմասնակցի բնակչության 89,4%-ը: Շիրակի մարզի Գտաշեն գյուղն, ըստ վիճակագրության, ունի 258 բնակիչ, բայց ընտրացուցակում գտաշենցիները 106 մարդով ավելի են գյուղում հաշվառված բնակիչների թվից: Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքում էլ ընտրացուցակներում 661 ընտրող է, մինչդեռ գյուղում հաշվառված է 547 բնակիչ: Սյունիքի Տորունիք գյուղում, ըստ ընտրացուցակների, ընտրության է գնալու բնակչության 92,8%-ը, քանի որ հաշվառված 138 բնակչից 128-ը առկա է ցուցակում: Իսկ նույն մարզի Ձորաստան համայնքը համադրելով վիճակագրության եւ ոստիկանության տվյալները, հակակոռուպցիոն կենտրոնը պարզել է, որ Ձորաստանում100 տոկոսանոց ընտրություն է լինելու: Այսինքն՝ հաշվառված 61 բնակչից 61-ն էլ հայտնվել է ընտրացուցակում: Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքում, համաձայն երկու պետական մարմնի տվյալների, 877 մարդ ավելի է գրանցված ընտրացուցակներում. Եղեգնաձորում հաշվառված է 8184 բնակիչ, իսկ ցուցակում առկա ընտրողների թիվը 9061 է:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

Առավոտ aravot daily
ՈՒՐԲԱԹ 4.05.2012

# «Մի՞թե ես ապրել եմ այլ Հայաստանում»



1997-2007թթ. աշխատել եմ «Հայփոստ» ՓԲԸ-ում, սկզբում որպես բաժնի պետի տեղակալ, այնուհետեւ ինֆորմացիայի կառավարման վարչության պետ: Այս վարչությունը, որը հետագայում վերանվանվեց ֆինանսական հոսքերի հաշվառման վարչություն, կազմավորել եւ ստեղծել եմ ես: Իմ անմիջական ղեկավարությամբ է սկսվել «Հայփոստ» ՓԲԸ-ում ներդրվել համակարգչային տեխնիկա, ծրագրեր, ստեղծել եւ ներդրել եմ կենսաթոշակ-նպաստների, այլ սոցիալական վճարների, կոմերցիոն ապրանքների վաճառքի, կոմունալ վճարների, գանձումների էլեկտրոնային կառավարման համակարգերը, որոնց արդյունքում «Հայփոստը» թոշակ բաժանող հիմնարկից վերածվեց հեղինակավոր հիմնարկի: 2006-ի վերջին «Հայփոստ» ՓԲԸ կառուցվածքային փոփոխության, նոր փոստային ինդեքսների ներդրման ծրագրերը ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու համար գրել եմ կոմունալ վարձավճարների գանձման բլոկի նոր ծրագրային համակարգ, որը ներդրվել է «Հայփոստի» բոլոր մասնաճյուղերում: «Հայփոստի» նախկին ղեկավար, հոլանդացի Հանս Բոնն ամեն անգամ խոստանում էր, որ հաջորդ եռամսյակում կվճարի «big money», սակայն տարբեր պատճառաբանություններով ձգձգում էր: Վերջին անգամ 2007-ի սեպտեմբերին «Հայփոստի» հանձնարարությամբ գրված «Կենսաթոշակ-նպաստների ու այլ սոցիալական վճարների» նոր բիզնես-ծրագիրը հանձնելուց առաջ ստացել եմ հավաստիացում, որ շուտով կվճարի, սակայն մեկ ամիսը չլրացած՝ հոկտեմբերի 5-ին անսպասելի ինձ ներկայացվեց հրաման, որով դադարեցվում էր իմ աշխատանքային պայմանագիրը: 2007-ի նոյեմբերի 7-ին դիմեցի դատարան եւ պահանջեցի իմ ստեղծած՝ «Հայփոստ» ՓԲԸ-ում անօրինական օգտագործվող համակարգչային ծրագրերի համար խոստացած գումարները: Անհնարին համարեցի աշխատել ՓԲԸ ղեկավարի հետ եւ աշխատանքից անհիմն ազատելու հարցը չվիճարկեցի: 2007-ի դեկտեմբերի 29-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը վճռեց իմ ստեղծած ծրագրերի դիմաց հօգուտ ինձ բռնագանձել 45000000 դրամ գումար՝ ապացուցված համարելով, որ դրանց հեղինակը ես եմ եւ «Հայփոստ» ՓԲԸ-ն դրանք օգտագործում է անօրինական: Դատարանի վճիռը վերաքննիչ դատարանի որոշմամբ բեկանվեց այն պատճառաբանությամբ, թե ծրագրերի արժեքը որոշվել է առանց փորձագետի եզրակացության: Երբ գործը գտնվում էր Երեւանի քաղաքացիական դատարանում, ՀՀ-ում գործող փորձագիտական կենտրոնները պատասխանեցին, որ նման ծրագրերը գնահատելու մասնագետ չունեն: Դատարանը այս անգամ էլ վճռեց հօգուտ ինձ «Հայփոստից» բռնագանձել 34400000 դրամ՝ նմանատիպ ծրագրերի պայմանագրային արժեքների նվազագույն արժեքը: Մեկ անգամ եւս վճիռը բեկանվեց մասնակիորեն՝ վերաքննիչ դատարանում, արժեքի մասով, սակայն վերաքննիչը հիմնավոր համարեց նման ծրագրերի համար գումար պահանջելու եւ չվճարված տարիների համար տոկոս հաշվարկելու իմ պահանջը: Վճռաբեկ դատարանը գտավ, որ վերաքննիչի եզրահանգումը ճիշտ է եւ վճարվելիք գումարի չափը փորձագետների կողմից որոշելու համար գործը ուղարկեց ստորադաս դատարան: Վճռաբեկ դատարանի որոշումից հետո անցել է 3 տարի, որի ընթացքում թեեւ դատարանի կողմից փորձագետ ճանաչված 3 մասնագետներն այդ համակարգչային ծրագրերը գնահատել են մինչեւ 43000000 դրամ, սակայն դատարանը նշանակել է լրացուցիչ փորձաքննություն: Թեեւ կա ուժի մեջ մտած դատարանի վճիռ եւ ակնհայտ է, որ այդ ծրագրերի հեղինակը ես եմ, սակայն ծրագրերի արժեքի որոշման հետ կապված վերջնական լուծումը միտումնավոր ձգձգվում է: Անցյալ տարի դիմել եմ ՀՀ նախագահին, ստացել եմ «սպառիչ» պատասխան ՀՀ արդարադատության նախարարությունից, այն է՝ «հարցի լուծումը դուրս է ՀՀ արդարադատության նախարարության իրավասության շրջանակից»: Ավելի քան 5 տարի, որից վերջին 4-ը մնալով անաշխատանք, սպասում եմ իմ աշխատանքով ստեղծված ծրագրերի համար հասանելիք գումարին, իսկ «Հայփոստը», 2006-ից սկսած, տարեկան միլիարդավոր դրամների եկամուտ է ստանում՝ օգտագործելով դրանք: Թվում է, թե ապրել եմ արդար ու զարգացող Հայաստանում եւ ապրելու եմ կատարյալ Հայաստանում: Շուտով 50-ս կլրանա, համալսարանից հետո մասնակցեցի Ղարաբաղյան շարժմանը, հետո՝ գիտական աշխատանքներ, 1997-ից օրական 15-20 ժամյա աշխատանք «Հայփոստում», իսկ 2007-ից՝ անգործություն, պարտքեր, վարկեր ու տոկոսներ: Ունեցածս երկու զինվոր որդի է ու մի կիսատ տուն, որն առնող էլ չկա, որպեսզի պարտքերս փակեմ, ընտանիքս վերցնեմ ու որեւէ գրողի ծոցը կորչեմ:

Մեծարգո այրեր, մի՞թե ես ապրել եմ ձեր կառուցած մեկ այլ Հայաստանում:

ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## Իջեւանի տարածաշրջանի գյուղապետերի ձեռքին 100 հազարանոցներ են հայտնվել

Մայիսի 2-ին Իջեւանում, հայաստանյան բանկերի տեղի մասնաճյուղերում Իջեւանի տարածաշրջանի գյուղապետերը 100 հազարանոց թղթադրամները փոխանակել են 5 եւ 10 հազարանոց թղթադրամների, բանկերում այս թղթադրամների պակաս է զգացվել: Գյուղապետերից ոմանք նախկինում, մինչ այդ 100 հազարանոցով գործարք չէին արել:

Մեր իրազեկ աղբյուրները հայտնում են, որ Իջեւանի տարածաշրջանի գյուղերում ընտրակաշառքի չափը սկզբից սահմանվել է 5 հազար դրամ: Սակայն գյուղապետերը դրան ընդդիմացել են, ասելով, որ 5 հազարով ոչ ոք ձայն չի տա: Դրանից հետո որոշվել է ընտրակաշառքի չափը դարձնել 10 հազար դրամ: Քանի որ ընդհանուր գումարը չի բավարարում, որոշվել է կրճատել ընտրակաշառքի ցուցակներում ընդգրկվածների թիվը:

ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Նորքի շրջանում «Արմենտելը» վաճառքի եւ սպասարկման նոր գրասենյակ է բացել

Գրասենյակը գտնվում է Ավետիսյան 48/1 հասցեում՝ «Սթար» սուպերմարկետի տարածքում: Նոր գրասենյակն աշխատելու է առանց հանգստյան օրերի՝ ժամը 09:00-ից մինչեւ 18:00-ը:

«Բացելով վաճառքի եւ սպասարկման նոր գրասենյակ՝ մենք փորձում ենք մեր ծառայություններն ավելի մոտ դարձնել մեր հաճախորդներին: Հեռախոսների եւ պլանշետների մեծ տեսականին, ինչպես նաեւ մեր կողմից մատուցվող ծառայությունների ողջ շրջանակն այժմ հասանելի է «Սթար» սուպերմարկետի այցելուներին: Համոզված եմ, որ սա եւս մեկ քայլ է առավելագույն արագ, սակայն որակով սպասարկում ապահովելու համար»,- նշեց «Արմենտել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Ինչպես ընկերությունից տեղեկացնում են, մոտ ապագայում «Արմենտել» ընկերությունը պլանավորում է մայրաքաղաքում բացել վաճառքի եւ սպասարկման եւս մի քանի գրասենյակ:

# 50 հազար դրամ փոխհատուցում՝ զրպարտության համար

2011թ. հուլիսի 15-ին «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ն Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել լրագրող Նաիրա Խաչիկյանի եւ «Իջեւան ստուդիա» ՍՊԸ-ի դեմ, հայտնելով, որ 2011թ. հունիսի 21-ին Հ2-ի «Լրաբեր» լրատվական ծրագրով, ինչպես նաեւ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվել է տեսանյութ, որի մեջ տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող, ընկերության գործարար համբավն արատավորող տեղեկություններ: Հայցվորը դատարանին խնդրել է Ն. Խաչիկյանին եւ «Իջեւան ստուդիային» պարտավորեցնել հրապարակային ներողություն խնդրել եւ պատասխանողներից համապարտությամբ որպես փոխհատուցում բռնագանձել 3 միլիոն դրամ, 264 հազար դրամ՝ որպես դատական ծախսեր եւ 64 հազար դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:



Նշենք, որ հայցը վերաբերում է պետբյուջեի միջոցներով «Իջեւանի ՃՇՇ»-ի կողմից Իջեւանի մի քանի փողոցների նորոգման հետ կապված հանգամանքներին: «Առավոտ» նախկինում անդրադարձել է այդ դատին («Կաֆկային վերհիշելով, կամ երկու դատավոր 8 ամսում չկարողացան վճիռ կայացնել»):

Գործի քննությունը դատարանի Դիլիջանի նստավայրում սկսվել է 2011թ. օգոստոսի 18-ին: Դատավոր Արշակ Շահոյանը նոյեմբերի 4-ին որոշել է գործի քննությունը հետաձգել մինչեւ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ Սահմանադրական դատարանում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի քննության ավարտը: Ա. Շահոյանի ամենամյա արձակուրդ գնալու կապակցությամբ դեկտեմբերի 12-ին գործը հանձնվել է դատավոր Արման Կուրեխյանին (Իջեւանի նստավայր): Վերջինս 2012թ. մարտի 7-ին գործի քննությունը համարել է ավարտված, վճռի հրապարակման օր է հայտարարել ապրիլի 22-ը, սակայն ՀՀ քաղաքացիական դատավարության 131-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա այդ օրը վերսկսել է գործի քննությունը: «Իջեւան ստուդիա» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է գործի քննության վայրի եւ ժամանակի մասին, սակայն վերջինիս ներկայացուցիչը երբեւէ դատական նիստերին չի մասնակցել, հայցադիմումի պատասխան չի ներկայացրել: Ն. Խաչիկյանը նույնպես դատարան չի ներկայացրել, դատարանում նրա շահերը պաշտպանել է փաստաբան Գարիկ Գալիկյանը: «Իջեւանի ՃՇՇ»-ի շահերը դատարանում ներկայացնում էր փաստաբան Նաիրա Խաչատրյանը: Դատավոր Ա. Կուրեխյանը այս գործով որպես նախադեպ համարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Լիգենսն ընդդեմ Ավստրիայի (08.06.1986թ.) գործով վճիռը՝ Ն. Խաչիկյանի ռեպորտաժում տեղ գտած «Գործարար դիմակի տակ իսկական ավերողներ են թաքնված մի պարզ անվամբ՝ Իջեւանի ճանշին ձեռնարկություն» արտահայտությունը վիրավորանք չի համարել, իսկ «սալահատակը քանդել են եւ ծախել վաճառել», «Իջեւանի ճանշինի թեթեւ ձեռքով վաճառվել է» արտահայտությունները համարել է պատասխանողի գործարար համբավն արատավորող եւ զրպարտություն:

Դատարանը համարել է, որ «Լրաբերի» 2011թ. հունիսի 27-ի թողարկման մեջ «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ի տնօրենը եւ աշխատակիցները ներկայացրել են հունիսի 21-ի թողարկման մեջ տեղ գտած տեղեկությունների վերաբերյալ իրենց պատասխանը եւ եզրակացրել. «տեսականորեն նույն լսարանը հնարավորություն է ունեցել ծանոթանալու նրանց դիրքորոշմանը»: Ա. Կուրեխյանը հայցը բավարարել է մասնակի եւ վճռել Նաիրա Խաչիկյանից հօգուտ «Իջեւան ՃՇՇ» ՓԲԸ-ի բռնագանձել 50 հազար դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցման գումար եւ մնացած մասով հայցը մերժել: Դատարանը վճռել է Ն. Խաչիկյանից հօգուտ «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ի բռնագանձել 20 հազար դրամ՝ որպես փաստաբանի վարձատրության գումար եւ 1500 դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հավելենք, որ «Իջեւանի ՃՇՇ»-ն 2011թ. պետական բյուջե է մուծել 267 միլիոն դրամ:

ՌՈՒԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Ռեկտորի փոփոխությունը բուհի զարգացման սկիզբ է»

## Գերմանացի պրոֆեսորը՝ Բրյուսովի ռեկտոր Սուրեն Զոլյանի պաշտոնանկության եւ բուհի մասին

Մաթիաս Ֆրիցը 4 տարի աշխատել է Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, ընդ որում՝ երկու տարի ղեկավարել է բուհի գերմաներենի ամբիոնը: Այժմ պարոն Ֆրիցը վերադարձել է իր հայրենիք՝ Գերմանիա, բայց սիրով է հիշում Հայաստանում աշխատած տարիները:

Aravot.am-ը նախկին բրյուսովցի պրոֆեսորին խնդրեց գնահատել համալսարանում ստեղծված իրավիճակը (ՀՀ կրթության եւ գիտության նախարարի կողմից տրված հրամանը՝ ռեկտոր Զոլյանին աշխատանքից ազատելու վերաբերյալ, ուսանողների դասադուլը եւ այլն): Պարոն Մաթիասի պատասխանը սեղմ էր. «Թեեւ ռեկտորի՝ աշխատանքից հեռացման պատճառները հայտնի չեն, բայց գտնում եմ, որ ռեկտորի փոփոխությունը Բրյուսովի համալսարանի՝ դեպի ժամանակակից համալսարան զարգացման սկիզբ է»:

Գերմանացի դասախոսին խնդրեցինք կարծիք հայտնել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների որակի ու մակարդակի մասին: «Բրյուսովի անվան համալսարանը բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն ունի միջազգային բարձր ճանաչում: Իմ Ֆրանսիայի գործընկերներից մեկը՝ Սորբոնի համալսարանից, մի առիթով մեծ հիացմունքով հարցրեց՝ օ՜, դուք աշխատում եք հայտնի Բրյուսովի համալսարանո՞ւմ: Այս հիացմունքը բնականաբար վերաբերում էր բուհի լեզվաբանական եւ պրակտիկ խոսակցական կրթությանը: Բրյուսովցի բազմաթիվ երիտասարդ կոլեգաներս գիտական մասնագիտացում են ստացել Արեւմուտքում: Ներկայումս իմ մագիստրոսներից երկուսը Գերմանիայի Բունդեստագի միջազգային պաղամենտական կրթաթոշակառու են: Իմ ավագ սերնդի կոլեգաների մեջ նույնպես կան հիանալի մասնագետներ, ինչպես, օրինակ, Մելանյա Ավետիսյանը: Իսկ երկու անվանի նախորդներս՝ գերմաներենի ամբիոնում, եղել են Գրիգոր Անդրեասյանը եւ Մանուշ Հարությունյանը»,- նշեց պարոն Ֆրիցը:





ԵԽ Նախարարների խորհրդի կողմից ընտրված Փոքրամասնությունների կամ տարածաշրջանային լեզուների եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեի անդամ Սուրեն Զոլյանին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը խիստ նկատողություն է հայտարարել՝ առանց իրեն տեղեկացնելու Կոմիտեի պլենար նիստին մասնակցելու համար: Եթե Գերմանիայում նման բան լիներ, ինչպիսի՞ հանգուցալուծում կստանար խնդիրը:

Գերմանացի պրոֆեսորն ասում է, որ երկու երկրների միջեւ նման համեմատական տանելը մի քիչ դժվար է, քանի որ կրթական քաղաքականությունը Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում առանձին մարզերի իրավասությունների շրջանակներում է. «Սակայն Գերմանիայում նույնպես ռեկտորը ընտրվում է համալսարանի խորհրդի կողմից, այնուամենայնիվ նշանակվում եւ աշխատանքից ազատվում է նախարարի կողմից: Գերմանիայում նույնպես վերջին խոսքը քաղաքականությանն է, ինչպես, օրինակ, դեսպանն է պարտավոր հետեւել արտաքին գործերի նախարարության ուղենիշներին»,-ասում է Մաթիաս Ֆրիցը: Մեր հաջորդ հարցին էլ՝ Գերմանիայում պատահե՞լ է դեպք, երբ որեւէ համալսարանի ռեկտոր դատի տա կրթության նախարարությանը, նա պատասխանեց. «Ճիշտն ասած, այդ մասին ես չեմ լսել: Որպես կանոն, ռեկտորները նաեւ պրոֆեսորներ են, որոնք ժամանակավորապես են ընտրվում ռեկտոր, եւ պաշտոնավարումից հետո հիմնվելով իրենց գիտական գերազանց որակավորման վրա՝ կարող են պարզապես շարունակել իրենց պրոֆեսորադասախոսական գործունեությունը»:

Դառնալով Հայաստանում իր աշխատած շրջանին՝ գերմանացի պրոֆեսորը հավելեց, որ տպավորված է բուհի գերմաներենի ամբիոնի աշխատակիցների աշխատասիրությամբ եւ լեզվի իմացությամբ. «Ուսանողների հետ աշխատանքը եւս հաճելի էր, քանի որ մեծամասնությունը հարցասեր եւ աշխատասեր էր, միմյանց օգնելու հարցում՝ պատրաստակամ: Նրանց թվում եւս շատ լավ մարդիկ կային, օրինակ՝ մեկից որպես հիշատակ յուղաներկով մի նկար եմ նվեր ստացել՝ «Մեր բակը» վերնագրով, որտեղ պատկերված է Բրյուսովի համալսարանի բակը»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Ինքնության բռնկումների պատճառով եւ ո՛չ թե՝ «քաղցր աչքի»

## Գոյատեւման բանաձեւ՝ ըստ ռեժիսոր Լեւոն Իվանյանի

Աժ ընտրությունների քարոզարշավները հաճախ ուղեկցվում են բեմական-հանդիսային արարողություններով: Դրանք պատշաճ կազմակերպելու համար, բնականաբար, անհրաժեշտ են փորձառու, բարձրակարգ մասնագետներ: Սակայն այդ համերգները դիտելիս դժվար չէ հասկանալ, որ դրանցով ոչ միշտ է մասնագետ զբաղվել:

«Առավոտը» հանդիպեց շուրջ 20 տարի Հայաստանում եւ արտերկրում բազմաբնույթ մասսայական հանդիսությունների ռեժիսոր Լեւոն Իվանյանին:

Մեր հետաքրքրությանն ի պատասխան՝ ռեժիսորն ասաց, որ ինքը չի մասնակցում նախընտրական քարոզարշավին, որովհետեւ, որպես կանոն, հիմնականում քաղաքական գործընթացները խիստ անարվեստ են:

Մեր զրուցակցի խոսքերով՝ «Սովորաբար քարոզարշավները նմանվում են ֆուտբոլային խաղի, որտեղ բոլոր թիմերն էլ նույն դարպասին են հարվածում»:

Նշեց նաեւ, որ իր տեսակետների մեջ սկզբունքային է ու հաստատ գիտի՝ ինչ է ուզում, բայց՝ «այն, ինչ ուզում եմ, հակասության մեջ է այն ամենի հետ, ինչ պահանջվում է»: Հիշեցրեց, որ գործի բերումով ինքը ընդհանրացնում է դեպքերը ու դրանց նայում մեծ ժամանակի մեջ: Այնուհանդերձ, արվեստագետի մասնագիտական խղճի թելադրանքով, հայ մարդու քաղաքացիական պարտքի գիտակցությամբ հորդորում է. «Զգույշ պետք է վարվել դեմոկրատիայի հետ: Այդքան մի հավատացեք դեմոկրատական շեփորվող բարբաջանքներին. դա մեր ազգային պետության համար կործանարար խաղ է»: Արվեստագետը շեշտեց, թե ինքը ոչ մի կուսակցության ու ոչ մի անձի դեմ չէ, եւ եթե դեմոկրատիայի գաղափարը վտանգում է հայ ազգի հարատեւ զարգացմանը, ուրեմն, իր խոսքերով՝ «կորչի նման դեմոկրատիան»:



Պարոն Իվանյանը կարեւորելով ազգայինը, որը քչերի մոտ է հասել գիտակցական մակարդակի, հայտնեց, թե իր համար անընդունելի է աշխարհի ներկայիս դրվածքը. «Մեր ազգային ինքնության բռնկումների պատճառով է, որ մինչ այժմ գոյատեւում ենք, այլ ոչ թե՝ «քաղցր աչքի», ուրեմն պետք չէ շոված աչքերով ու բաց բերանով լսել ամեն բան ու կուրորեն ընդունել: Չե՞ք տեսնում՝ աշխարհը ուրիշ արժեքներով է ապրում: Այդ ո՞վ ասաց, որ նրա՛նք են ճիշտ: Բացեք աչքներդ, տեսեք, որ Արեւմուտքը բարոյապես խիստ հետամնաց է, այն ավելի վայրենի աշխարհ է, քան մեր խեղճուկրակ երկիրը: Վերցնենք դեմոկրատիայից այն, ինչն օգտակար է մեր պետականությանն ու ազգին»:

Իսկ կոնկրետ այս ընտրությունների հետ կապված՝ փաստեց, որ ընտրաթերթիկում տեղ չի գտել «բոլորին դեմ եմ» տողը եւ ասաց. «Եթե հայության մեջ երբեւէ հայտնվի մի գործիչ, որ կարողանա միավորել հայությանը, ապա ես փակ աչքերով կգնամ նրա ճանապարհով, նույնիսկ եթե նա երեխա լինի»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Մոլորյալ մոլորեցնողները

Այսօր այնպիսի մտայնություն է ձեւավորվել, որ կարծես բազմաթիվ ու բազմաբնույթ աղանդավորական հոսանքների ակտիվ գործունեության եւ մեր իրականության մեջ արձանագրված ցավալի մի շարք երեւույթների (ինքնասպանություն եւ սպանություն, ընտանիքի քայքայում եւ այլն) միջեւ փոխադարձ կապ է հաստատվել: Թե որքանով է փոխադարձ այդ կապն ու պայմանավորվածությունն՝ իրական, ոչ միշտ է տեսանելի լինում: Անեն դեպքում, անտարակուսելի եւ անվիճելի է, որ աղանդավորությունը, առավել քան մեր կյանքի որեւէ երեւույթ, հոգեւոր պառակտում է սերմանում հասարակության գիտակցության մեջ:

Աղանդավորական ներթափանցումները հոգեւոր դաշտ մտահոգիչ եւ սպառնացող երեւույթներ են ամբողջ աշխարհում: Անձի հոգեբանական մշակումը, սիրո «ռմբակոծումը», մտածողությունը մթագնող կամ կասեցնող մեթոդների կիրառումը, վախի եւ մեղքի զգացողության առաջացումը, գիտակցության ապակայունացումն ու ապակողմնորոշումը եւ աղանդներին բնորոշ մյուս մեթոդները թույլ են տալիս վերահսկելու մարդու ներաշխարհը: «Նրանք երբեւէ իմ հանդիպած ամենաբարեհամբույր մարդիկ են, ովքեր կիսում են իմ մտահոգությունները եւ պարուրում հաճոյախոսություններով, հավատում են իմ ուժերին ու կարողություններին եւ միեւնույն ժամանակ գիտեն բոլոր հարցերի պատասխանները»,- ահա թե ինչ մտքեր են պտտվում հետաքրքրության մղումով աղանդավորական հավաքներին մասնակցած մարդու գլխում: Եվ այստեղ է, որ առավել ակնհայտ է դառնում մի պարզ ճշմարտություն՝ փոս ընկնելն այնքան վտանգավոր չէ, որքան փոսում մնալը:

Այսպիսի հոգեպարար իրավիճակում հայտնված մարդուն բավական է մի քանի անգամ ասել, որ նա ընտրյալ է՝ բացառիկ իր ունակություններով ու կարողություններով, եւ նա կսկսի նույն բանում «համոզվել»: Այստեղից էլ սկսվում է աղանդի թիրախում հայտնված մարդու՝ սեփական անձը եւ հոգեբանությունը քայքայելու գործընթացը: Սա ավելի քան ցավալի երեւույթ է, քանզի նման մարդիկ սովորաբար նվիրված, անկեղծ մղումներով առաջնորդվող եւ որոշ արժեքներ փնտրող անհատականություններ են, ովքեր այդ արժեքների փնտրտուքի ճանապարհին եւ կյանքի ինչ-ինչ հանգամանքներում հայտնվել են աղանդների ցանցում՝ պատկերացում չունենալով անգամ, թե ինչ սպառնալիքի տակ են դրել իրենց եւ շրջապատի ֆիզիկական ու հոգեւոր առողջությունը: Սովորաբար հենց նման մարդիկ էլ դառնում են այն գործող ու պատրաստակամ ուժը, ովքեր առավելագույն ջանք են ներդնում՝ իրենց համար արդեն «ճշմարիտ դարձած» գաղափարները հասանելի դարձնելու նաեւ իրենց եղբայրներին: Նրանք անգիտակցորեն դառնում են մոլորյալ մոլորեցնողներ:

Բայց, ի վերջո, մտացածին կեղծ գաղափարների անհամատեղելիությունը քրիստոնեական ճշմարտության հետ նախապայման չպետք է դառնա անհանդուրժող վերաբերմունքի եւ թշնամական տրամադրվածության: Պարզապես պետք է հիշել, որ աղանդի մեխանիզմը, հանուն ինքնապատակության, վարագույր է քաշում ճշմարտության եւ կեղծիքի միջեւ՝ անտեղյակ մարդուն մեկուսացնելով իրականությունից: Պարզապես պետք է պատռել այդ վարագույրը, որպեսզի նա երեւույթները զանազանելու եւ ճանաչելու հնարավորություն ունենա:

Արդի ժամանակների հոգեւոր անառողջ այս վիճակը հրամայական է դարձել՝ խորհելու այն մասին, որ այսօր, առավել քան երբեւէ, մեր ապագան կախված է նրանից, թե ինչպիսի արժեքների կտանք առաջնայնությունը:

ԺՈՐԱ սարկավագ ՍԱՐԳՍՅԱՆ

Առավոտ aravot daily
ՕՐԱԹԵՐԹ 4.05.2012

VivaCell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Հավատանք, որ ամեն ինչ լավ կլինի

## Օլիմպիական խաղերում կանանց ծանրամարտի մրցաշարին Հայաստանը ներկայացված է լինելու երկու մասնակցով

Իտարբերություն մեր յոթ տղամարդկանց, որոնք միմյանց միջեւ մրցակցում են հավաքականի չորս թափուր տեղերն զբաղեցնելու համար, այստեղ ամեն բան հայտնի է: Լոնդոն մեկնելու են 69 կգ քաշային Մելինե Դալուզյանը եւ Հռիփսիմե Խուրշուդյանը՝ 75+ քաշային կարգ: Նրանք ներկայումս ուսումնամարզական հավաքում են եւ պատրաստվում են քառամյա մարզական ցիկլի գլխավոր մեկնարկին:

«Առավոտը» զրուցեց կանանց հավաքականի գլխավոր մարզիչ Արտաշես Ներսիսյանի հետ: Նա հավատում է, որ ամեն ինչ լավ կլինի:

- Անցած մրցաշրջանը մեր աղջիկների համար էլ հաջող չստացվեց: Երկուսն էլ լուրջ վնասվածքներ ստացան եւ այս ընթացքում ամբողջ ժամանակի մեծ մասն անցկացրին դրանք բուժելով: Ի՞նչ մարզավիճակում են նրանք հիմա, երբ Խաղերի մեկնարկին երեք ամսից էլ պակաս ժամանակ է մնում:

- Փառք Աստծո, վատ ժամանակներն արդեն ետեւում են, եւ երկուսն էլ ձեռնամուխ են եղել լիարժեք մարզումների: Ճիշտ է, լավագույն մարզավիճակին դեռ չեն հասել, սակայն աստիճանաբար մոտենում են դրան: Հույս ունենք, որ օլիմպիական մեկնարկների օրերին թե Մելինեն եւ թե Հռիփսիմեն հասած կլինեն իրենց իրական կարողությունների առավելագույնին: Միայն թե՝ այս ընթացքում նրանց հետ չնախատեսված նոր տհաճ անակնկալներ չլինեն:

- Գիտենք, որ երկուսն էլ Լոնդոն մեկնելու են մեդալներ նվաճելու համար: Ո՞ր գույնը ձեզ կբավարարի:

- Մենք իրականության աչքերին ուղիղ ենք նայում եւ չենք ցանկանում խաբել ոչ մեզ, ոչ էլ մեր երկրպագուներին ու ղեկավարությանը: Հռիփսիմեի իրական «կռիվը» լինելու է բրոնզե մեդալի համար, թեեւ հանգամանքների հաջող զարգացման դեպքում կհավակնի ավելի բարձր տեղերի: Նրա քաշային կարգում շատ ուժեղ մրցակցություն է: Այստեղ են







ռուսաստանցի Տատյանա Կաշիրինան, չինացի աշխարհի գործող չեմպիոնը: Շատ ուժեղ մարզուհիներ կան Կորեայից, Նիգերիայից, Ադրբեջանից, որի դրոշի ներքո հանդես է գալիս ուկրաինուհի: Նրանց բոլորին էլ տեսել ենք Փարիզում անցկացված աշխարհի վերջին առաջնությունում: Բայց Հռիփսիմեն ամենեւին էլ չի զիջում: Ավելին, հանգամանքների հաջող զարգացման դեպքում նա կարող է լուրջ խնդիրներ առաջադրել թվարկածս մրցակիցներին:

- Ի՞նչ ասել է՝ հանգամանքների հաջող զարգացում:

- Ֆրանսիայում Հռիփսիմեն շատ լավ մարզավիճակում էր: Նրան ծանրաձողն այնքան հեշտ տրվեց, որ նա մի պահ «կորցրեց» այն, չկարողացավ ծանրաձողը գլխավերեւում ճիշտ ընդունել եւ վարժությունը մինչեւ վերջ կատարել: Եվ այն պահելու համար մղած պայքարը վնասվածքի պատճառ դարձավ:

Վիրահատությունից ու տեւական բուժումից հետո Խուրշուդյանն արդեն վերսկսել է մարզումները, եւ այս երեք-չորս ամիսների ընթացքում առաջընթացը նկատելի է: Մենք չենք շտապում: Ժամանակ կա: Հիմա կարեւորն այն է, որ ոտքից վերցրած եւ թեւին պատվաստված ջիղը ադապտացվի ու սկսի լիարժեք աշխատել:

- Գերծանր քաշային կարգերում եւ, ընդհանրապես, ծանրամարտում մեծ կարեւորություն ունի մարզիկի անձնական քաշը: Ֆրանսիայում Հռիփսիմեն ամենաթեթեւներից էր: Այդ մասի՞ն ինչ կասեք:

- Մարզիկի անձնական քաշի ամեն մի կիլոգրամը ծանրաձողի լրացուցիչ քաշ է ենթադրում: Հռիփսիմեն աղջկական մտածողությամբ առաջ այնքան էլ չէր ցանկանում հետեւել այդ կանոնին: Բայց հիմա նման խնդիր չկա: Նրա գենետիկ եւ ֆիզիոլոգիական տվյալներն այնպիսին են, որ որքան էլ անձնական քաշն ավելանա, նա չի ճարպակալվում, ինչպես տեսել ենք մրցակիցներից շատերի մոտ: Հռիփսիմեի քաշի ավելացումը կատարվում է մկանների զարգացման հաշվին, եւ նա մնում է գեղեցկատես: Բայց նրա հիմնական խնդիրը, մեր կարծիքով, հոգեբանական կարող է լինել՝ կապված վերջին վնասվածքի հետ կապված վախի բարդույթի հետ: Եթե կարողանա մոռանալ կատարվածը, լիովին հավատալ իր ուժերին, հավատացեք, որ կարող է նաեւ Լոնդոնում անակնկալներ մատուցել մրցակիցներին:

- Ի՞նչ կասեք Մելինե Դալուզյանի մասին:

- Նա էլ լիովին ապաքինվել է ու լիարժեք մարզվում է: 69 կգ քաշային կարգում Մելինեն համարվում է օլիմպիական մեդալների հավակնորդներից մեկը: Լոնդոնում նրա հիմնական մրցակիցը, թերեւս, նույնպես ռուսաստանցի Օքսանա Սլիվենկոն է լինելու: Բայց չեմ բացառում, որ ուրիշներն էլ կարող են հայտնվել: Այնպես որ, հարկավոր է, որ նա էլ մոռանա բոլորի եւ ամեն ինչի մասին ու շարունակի մարզավիճակը բարձրացնել:

- Նա է՞լ է պայքարելու բրոնզե մեդալի համար:

- Բոլոր հարցերի պատասխանը մրցահարթակն է տալու: Կարծում եմ՝ երկամարտի 270 կիլոգրամը մեդալ է, լավ մեդալ: Եվ եթե ամեն բան ընթանա մեր ծրագրածով, Դալուզյանը պետք է որ առնվազն այդ արդյունքը ցույց տա: Բայց եկեք առաջ չընկնենք: Օլիմպիական խաղերում ինչ արդյունք էլ որ լինի, մենք՝ մարզիչներս, ինչպես ասում են՝ տեր ենք:

- Հավաքները նորմա՞լ են անցնում:

- Միանգամայն: ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը եւ մեր Ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանը ոչինչ չեն խնայում: Ուսումնամարզական հավաքներն ընթանում են ըստ պլանի: Մարզվում եւ առաջիկայում էլ մնալու ենք հանրապետությունում՝ մինչեւ Լոնդոն մեկնելը: Հավատանք, որ ամեն ինչ լավ կլինի:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

### Ճշտում

Մայիսի 2-ի «Առավոտում» տպագրված «Յոթ լավագույններից ընտրվելու են չորս արժանիները» նյութում երկու անճշտություն է եղել: Նյութում տպագրվել է, թե ծանրամարտի տղաների հավաքականը Ծաղկաձորից հետո պատրաստվում է մեկնել Թեոդոսիա: Իրականում Թեոդոսիայում այս տարի արդեն հավաք անցկացվել է: Իսկ թիմը ոչ մի տեղ մեկնել չի նախատեսում եւ ուսումնամարզական հավաքները շարունակելու է Հայաստանում: Ծաղկաձորում մարզվող եւ օլիմպիական խաղերին նախապատրաստվող մեր ծանրորդների թվարկումում դուրս են մնացել 85 կգ քաշայիններ, պոկում վարժությունում աշխարհի չեմպիոն Արա Խաչատրյանի եւ Արայիկ Միրզոյանի անունները:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# «Նախագահը ոտքի վրա «ջրեց» կառավարության որոշումը»

## Այս կարծիքին է փորձագետը

Քաղաքական եւ ընտրական տեխնոլոգիաների փորձագետ Արմեն Բադալյանն ու մեդիա փորձագետ, Iditord.org կայքի համակարգող Սամվել Մարտիրոսյանն ամփոփելով քարոզարշավը՝ անդրադարձան ընթացքում օգտագործված տեխնոլոգիաներին: Բադալյանի կարծիքով՝ նախ միօրինակ քարոզարշավ էր, հիմնական տեխնոլոգիան՝ հանրահավաքներն ու հանդիպումներն էին ընտրողների հետ: Ուրիշ ագիտացիոն տեխնոլոգիաներ չկիրառվեցին, օգտագործվեց միայն քաղաքական եւ ընտրական տեխնոլոգիաների 1%-ը: Մարտիրոսյանի համոզմամբ էլ՝ տեխնոլոգիաներն իրոք քիչ էին, ու այս անգամ նույնիսկ DVD-ների տեսքով պարտիզանական մեթոդները չկիրառվեցին, որն անում էին նախկինում. «Ուժեղ օգտագործվեց միայն ցանցը, բացվեցին բազմաթիվ լրատվական կայքեր, ձեւավորվեցին տեղեկատվական հոսքեր: Ցանցը դարձավ հիմնական քարոզչական հարթակներից մեկը»:

Անդրադառնալով քաղաքական ուժերին՝ Բադալյանն ասաց, թե ՀՀԿ-ն տարբեր ստրատեգիաներ տարավ իր քարոզարշավի ժամանակ, դրանցից մեկը՝ քարոզարշավներին կուսակցության նախագահի՝ Սերժ Սարգսյանի մենակ գնալն էր, ինչը ճիշտ չէր, քանի որ ԱԺ-ն մեկ մարդու տեղ չէ. «Դա նախագահի ընտրություն չէ: Ազգային ժողովը թիմի ընտրություն է: Անհասկանալի է, եթե ՀՀԿ նախագահը գնում է որեւէ ընտրատարածք եւ ասում, օրինակ, ձայն տվեք այսինչ թեկնածուին, ապա ինչու այդ մարդիկ քարոզարշավի ժամանակ ելույթներ չեն ունենում ու չեն կանգնում նրա թիկունքին: Այսինքն՝ ստացվում է այնպես, որ նախագահը ամաչում է այդ մարդկանցից, կամ՝ եթե ամաչում է, ինչո՞ւ է ընդգրկել իր ցուցակի մեջ: Տպավորությունն այնպիսին էր, որ Սերժ Սարգսյանը չկարողացավ թիմ ձեւավորել: Սխալ էր նաեւ Մաշտոցի պուրակի PR կիքսը: 80 օր շարունակ պայքար էր գնում, որ բուտիկներ չդրվեն, քաղաքապետն ասաց՝ պետք է դրվի, կառավարությունը որոշում կայացրեց, մեկ էլ հանկարծ քվեարկությունից 4 օր առաջ համակարգի ղեկավարը գալիս ու ասում է՝ հանիր: Նախ՝ նախագահն ինչ իրավունք ունի կարգադրել ՏԻՄ-ի ղեկավարին: Բացի այդ՝ նախագահը ոտքի վրա «ջրեց» կառավարության որոշումը: Իրականում՝ եթե PR ես անում, ապա պետք է տիրապետես դրա կանոններին, հակառակ դեպքում քո դեմ է աշխատում»: ԲՀԿ-ի մասով էլ Բադալյանը կարծում է, որ հզոր էներգետիկա կար, TV-ն ցույց էր տալիս, թե հսկայական մարդիկ են գալիս նրանց հավաքներին, բայց դա քաղաքական չէր. «Քաղաքական կոմպոնենտը այստեղ միայն Վարդան Օսկանյանն էր: ՀԱԿ-ի մոտ էլ սկզբնական շրջանում հաջող չէր քարոզարշավը, ապա հստակեցվեց, ասելով՝ ձայն տվեք Կոնգրեսին, բայց թե ինչու՝ պարզ չէր: ՀԱԿ-ի կիրառած միակ լավ տեխնոլոգիան «30 վայրկյանն» էր»: ՀՅԴ-ն էլ, ըստ Բադալյանի՝ վերցրեց իր քարոզչական ագիտացիան, դրեց իր ծրագրի վրա, խիստ գերագնահատելով այն, բայց հասարակությունն արդեն ծրագրերի չի հավատում: «Քարոզարշավը դա գիտխորհուրդ չի, որ դնես եւ ուսումնասիրես ծրագրերը: ՀՅԴ-ի հիմնական մրցակիցներն էին «Ժառանգությունն» ու ՕԵԿ-ը, որը Հայ դատի վրա էր քարոզարշավ կատարում: ՕԵԿ-ը 2008 թվի մարտի 1-ից դադարել է որպես կուսակցություն գոյություն ունենալ եւ եթե խորհրդարանում հայտնվի էլ, ապա դա կլինի շնորհիվ վիրտուալ ընտրողների, մեկ էլ մահացածների, արտագաղթածների ու ՀՀԿ-ից տարած ձայների հաշվին: Ամենից կիքսոտը «Ժառանգության» քարոզարշավն էր: Նրանք ամենասկզբում ասացին, մենք շատ տեղ ենք ունենալու, դե եթե այդպես է, ինչո՞ւ դաշինք չստեղծվեց»,- հավելեց Բադալյանը:

Մարտիրոսյանն էլ շեշտեց, որ ընտրությունների օրերին ընտրական տեխնոլոգիաներից է կայքերի վրա հարձակումը: Իսկ սոցցանցերն առավել շատ օգտագործել են ՀՀԿ, ԲՀԿ, որովհետեւ նրանք ակտիվ երիտթեւեր ունեն:

Քարոզարշավի ընթացքի մասին էլ Մարտիրոսյանն ասաց՝ «իշխանության երկու ուժերը՝ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն, եւ ընդդիմադիր երկու ուժեր՝ ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը» պայքարում են միմյանց դեմ, իսկ ՕԵԿ-ը լավ երգ է գրել, ու դրանով ամեն ինչ ավարտվել է»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ